

մը չեն ազգագրորէն ըմբռնելու այն բաւ-  
 ական տարածուած յորջորջանքը, որով  
 արդի Համշէնցին եւն «Հայ-Լազ» կը կո-  
 չուի: Այս յորջորջանքն այսօր պարզապէս  
 տարազին համար է, զոր կը սիրեն կրել՝  
 չի միայն Համշէնցին եւ իւր գաղութները,  
 այլ նաեւ Ծորոխի գծի վրայ, Թորթում, եւ  
 նաեւ այլուր. տարազ մը՝ որ ի վերջոյ մի-  
 այն լաղին ալ յատուկ չէ: «Խաղտիք» անունն  
 այսօր հայ ժողովրդեան քով սովորական  
 ծանօթ չէ, մինչդեռ մնացած է Պոնտական  
 լեռնաշղթային հին Պարխար անունը (յն. եւ  
 լտ. մատենագրաց Paryadres), եւ ի վեր-  
 ջոյ նաեւ Կիպիոտի քարտէսը կը նշանակէ  
 անոր մէկ մասը՝ Balchar-Dagh: Կայ այսօր  
 ալ համանուն (Parchal) գիւղ մը՝ տա-  
 կալին կանգուն գեղակերտ եկեղեցիով եւ  
 Պարխալ-ջուր մը՝ որ Խեւակի ջրոյ հետ  
 միացած՝ Ծորոխ կը թափուի:

Այժմ անցնինք տեսնելու այս Պար-  
 խարի եւ Խաղտեաց ծովահայեաց երեսի  
 հայ գաւառները՝ Համշէն ու Սեւ Գետ: